# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**24.07.2025թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-25/126» գնման պայմանագրի**

ք. Երևան «04» « 02 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Սեդոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.07.2025թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-25/126» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 9000000 ( ինը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գնի մնացած 1875020 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Երևաննախագիծ» ՓԲԸ |
| ք. Երևան, Արգիշտիի 1 | ՀՀ, ք Երևան, Բուզանդի 1/3 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Էվոկաբանկ ՓԲԸ |
| ՀՀ 900011056166 | Հ/Հ 1660000215670100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02500241 |
| Վ. Պապիկյան ____________ (ստորագրությունը, ԿՏ) | Ա. Սեդոյան ____________ (ստորագրությունը, ԿՏ) |

Հավելված թիվ 1

24.07.2025թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-25/126» գնման պայմանագրի

«04» «02» 2026 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 98111140/16 | Հեղինակային հսկողության ծառայություններ | 0 | 4500000 | 4500000 | 6300000 | 6300000 | 6300000 | 7500000 | 7500000 | 7500000 | 9000000 | 9000000 | 9000000 | 9000000 | |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Երևաննախագիծ» ՓԲԸ |
| ք. Երևան, Արգիշտիի 1 | ՀՀ, ք Երևան, Բուզանդի 1/3 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Էվոկաբանկ ՓԲԸ |
| ՀՀ 900011056166 | Հ/Հ 1660002156700100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02500241 |
| Վ. Պապիկյան | Ա. Սեդոյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |